Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 2913-Ա 11.09.2019 թ.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհուրդը ձևավորել հետևյալ կազմով.

1. Ռուզաննա Սադոյան –Ֆակուլտետի դեկան
2. Հայարփի Հակոբյան – ուսումնական գծով դեկանի տեղակալ
3. Ներսես Սամվելյան –գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, արհմ. կոմ կազմ. նախագահ
4. Աշոտ Խոյեցյան - աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոնի վարիչ
5. Կարինե Դանիելյան – էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ
6. Արմեն Թամազյան – ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
7. Կամո Վարդանյան –գիտահետազոտական կենտրոնի ղեկավար
8. Սամվել Պիպոյան – կ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
9. Մեժլում Երիցյան- ք.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
10. Արմեն Առուստամյան- ք.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
11. Տիգրան Թանգամյան – մ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
12. Գևորգ Կարապետյան – ա.գ.դ., պրոֆեսոր, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
13. Վարուժան Հովհաննիսյան – կ.գ.դ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն
14. Ցուրիկ Մուրադյան – ա.գ.թ., պրոֆեսորի պ/կ., աշխարհ. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
15. Անահիտ Մինասյան-մ.գ.թ., դոցենտ, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
16. Լյուդմիլա Ավանեսյան- մ.գ.թ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն
17. Նարեկ Գրիգորյան- ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
18. Անի Օհանյան– ուսանող
19. Նուբար Զախարյան – ուսանող
20. Անի Ղարիբյան– ուսանող
21. Լիլիթ Հակոբյան – ուսանող
22. Նարինե Թաթոյան – ուսանող
23. Սանասար Գասպարյան– ուսանող
24. Լուսինե Անդրեասյան – ուսանող
25. Անի Թամրազյան– ուսանող

ՌԵԿՏՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019թ. Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 1 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. 2019-2020ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնների աշխատանքային պլանի քննարկում: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
2. Տեղեկատվություն բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուսերի ընդունելության վերաբերյալ: **Զեկ. Ռ. Սադոյան**
3. Google classroom հարթակում ֆակուլտետի պռոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թոմատիկ տրոհումներ): **Զեկ.Ռ. Սադոյան և ամբիոնների վարիչներ**
4. Ամբիոններում «Դասընթաց ուսանողի ընտրությամբ» առարկաների ցանկի քննարկում և հաստատում: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
5. Բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպում, բակալավր 3-րդ կուրսի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Ի. Սիրեկանյան**
6. Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
7. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ամբիոնների վարիչների զեկուցումը 2019-2020 տարվա 1-ին կիսամյակի ամբիոնների աշխատանքային պլանի վերաբերյալ: Նրանք նշեցին, որ 1-ին կիսամյակի ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել և հաստատվել են ամբիոնների նիստերի ժամանակ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի ընդունելության վերաբերյալ: Կցվում է

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի և ամբիոնների վարիչների տեղեկատվությունը Google classroom հարթակում ֆակուլտետի պռոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին: Ռ. Սադոյանը նշեց, որ Google classroom հարթակի մշտադիտարկման գործընթացը պետք է շարունակական կերպով ամբիոններում քննարկվի, և մշտապես կատարվեն լրամշակման աշխատանքներ: Ամբիոնների վարիչները նշեցին, որ ամբիոնների նիստերի ընթացքում պարբերաբար քննարկման առարկա է դառնում առարկայական նկարագրերի թեմատիկ տրոհումների բարեփոխման, դասախոսությունների նյութերի թարմացման, հարթակի հետ կատարվող աշխատանքների ակտիվացման հարցը:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումը «Դասընթաց ուսանողի ընտրությամբ» առարկաների ցանկի քննարկման և հաստատման վերաբերյալ: Ա. Խոյեցյանը ներկայացրեց առարկաների ցանկը և նշեց, որ դրանքն քննարկվել են ամբիոնի նիստում և դասախոսական անձնակազմի կողմից տրվել է հավանություն: Ռ. Սադոյանը նշեց, որ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ընտրովի դասընթացների ցանկը նույնպես քննարկվել է ամբիոնի նիստում և առժանացել հավանության: Կ. Դանիելյանը նշեց, որ իրենց ամբիոնի նիստում նույնպես քննարկման են դրվել առարկաները և արժանացել հավանության:

Որոշեցին- Հաշվի առնելով ամբիոնների վարիչների ներկայացրած տեղեկատվությունը հաստատել «Դասընթաց ուսանողի ընտրությամբ» առարկաների ցանկը:

Լսեցին- Ի. Սիրեկանյանի ելույթը բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպում, բակալավր 3-րդ կուրսի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Նա նշեց, որ բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները պրակտիկայի վարչության կողմից արդեն իրականացվել են, պատրաստ են նաև պրակտիկաների հստակ գրաֆիկները: Սահմանված են դպրոցները, մագիստրատուրա 2-րդ կուրսերի պրակտիկան կազմակերպվում է համալսարանում: Բացառություն են Լանդշաֆտային պլանավորում և Շրջակա միջավայրի գիտություններ մասնագիտությունների մագիստրարտուրա 2-րդ կուսերի պրակտիկաները որոնք կազմակերպվում են հանրապետության համապատասխան գիտական հաստատություններում մասնավորապես Երևանի

քաղաքապետարանի, տարբեր նախարարությունների համապատասխան վարչություններում: Նա նաև նշեց, որ բակալավրիատի 3-րդ կուրսերի պրակտիկան ընթանում է իր բնականոն հունով:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումը Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Ռ. Սադոյանը նշեց, որ որպես ամբիոնի վարիչի պաշտոնակատար ամբիոնի նիստին քննարկել է մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաները նկատված թերությունները ներկայացվել են ղեկավարներին համապատասխան շտկումներ կատարելու նպատակով: Ա. Խոյեցյանը նշեց, որ ԱԴՄ ամբիոնում նույնպես քննարկվել են թեմաները ձևավորվել է նախնական տեղեկություն ներկայացված թեմաների բովանդակության վերաբերյալ. բայց ամսի 26-ի ամբիոնի նիստում ևս նախատեսել ենք քննարկել թեմաների վերջնական տարբերակները ապա նոր ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ: Կ. Դանիելյանը նշեց, որ իրենց ամբիոնի դասախոսները նույնպես ներկայացրել են մագիստրոսական ատենախոսությունների թեմաները, որոշակի շտկումներից հետո կներկայացվեն ֆակուլտետի խորհուրդ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019թ. նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 2 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի քննաշրջանի պարտքերի մարման փուլերի արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սադոյան**
2. Տեղեկատվություն ֆակուլտետի շարունակական պրակտիկայի և բակալավրիատի 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: **Զեկ. Ի. Սիրեկանյան**
3. Տեղեկատվություն մագիստրատուրայում հետազոտական պրակտիկաների կազմակերպան վերաբերյալ: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
4. Տեղեկատվություն հեռակա բակալավրիատի 1-ին կուսերի ուսումնական գործընթացի կազմակերպման մասին: **Զեկ. Հ. Հակոբյան**
5. Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
6. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի հաղորդումը 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի քննաշրջանի պարտքերի մարման փուլերի արդյունքների վերաբերյալ: Սադոյանը ներկայացրեծ հեռակա ուսուցման քննաշրջանի պարտքերի մարման արդյունքները նա նշեց, որ 155 ուսանողներից լուծարքային փուլին մասնակցել են թվով 112 ուսանող, դրական գնահատականներ են ստացել 97 ուսանող, անբավարար 15 ուսանող, 10 ուսանող պայմանական փոխադրվել են հաջորդ կուրս, իսկ 5 ուսանող՝3 հոգի աշխարհագրությունից և 2 հոգի կենսաբանություն մասնագիտություններից ներկայացվել են հեռացման: Ինչ վերաբերում է մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգին ապա Ռ. Սադոյանը նշեց, որ ֆակուլտետն ոունի միայն 1 հեռակա մագիստրոսական

ուսուցման մասնագիտություն դա, «Լանդշաֆտային պլանավորումն» է որտեղ ունենք 8 ուսանող, որոնցից ընդամենը լուծարային փուլին մասնակցել է թվով մեկ ուսանող և ստացել է դրական գնահատական:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ի. Սիրեկանյանի հաշվետվությունը ֆակուլտետի շարունակական պրակտիկայի և բակալավրիատի 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Նա նշեց, որ պրակտիկան արդեն մեկնարկել է: Ուսումնաճանաչողական պրակտիկայի հետ կապված նա նշեց, որ ունեցանք խնդիրներ հոգեբաբի և մանկավարժի հետ կապված ուսանողներից տեղեկացանք, որ մանկավարժն ու հեգաբանը ուսանողի հետ չեն մտնում դասավանդվող դասարան, ուսանողներին բաժանել են համապատասխան թերթիկներ բայց բուն դասապրոցեսին չեն մասնակցում: Դա վերաբերում է հատկապես քիմիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների պրակտիկային: Ի. Սիրեկանյանը նշեց, որ մանկավարժների և հոգեբանների դասապրոցեսին մասնակցության հարցը, իր որպես ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարի ուշադրության կենտրոնում է: Ինչ վերաբերում է 4-րդ կուրսերի պրակտիկաների նա նշեց, որ դրանք ընթանում են նորմալ, դպրոցների հետ կապված խնդիրներ առայժմ չկան: Այս տարի խմբերը կազմվեցին այնպես, որ ուսանողները կարողանան իրենց ավարտական աշխատանքների թեմաների վրա աշխատել հենց դպրոցում՝ պրակտիկայի ընթացքում:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրատուրայում հետազոտական պրակտիկաների կազմակերպան վերաբերյալ: Քանիո որ ԱԴՄ ամբիոնի վարիչ Ա. Խոյեցյանը նիստին ներկա չէր ուստի հարցը չքննարկվեց: Կենսաբանության, քիմիայի և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի համապատասխան տեղեկատվությունը ներկայացրեց Ռ. Սադոյանը որպես ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: Նա նշեց, որ ամբիոնի հետազոտական պրակտիկաները կազմակերպվում են համապատասխան գիտաուսումնական հաստատություններում և կենտրոններում, որոնց հետ պայմանագրերի թարմացման խնդիր ունենք այս տարի: Պայմանագրերն այս տարի փարմացվեցին որոշ հասատատությունների հետ էլ պայմանագրերը գտնվում են թարմացման փուլում: Մագիստրոսները պրակտիկա են անցկացնում նաև բակալավրիատում կատարում են դասալսումներ, վարում են սեմինար և գործնական աշխատանքներ: Ռ. Սադոյանը նշեց նաև որ իր կարծիքով այդ ու հանդերձ պրակտիկանները արդյունավետ չեն քանի որ դեռևս չեն ծառայում պրակտիկայի

բուն նպատակին: Ուստի խնդրեց առաջարկություններ, կոնկրետ մոտեցումներ ներկայացրեք քննարկման և տանք հստակ լուծումներ:

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ Կ. Դանիելյանը նշեց, որ համագործակցության պայմանագրեր ունենք գիտահետազոտական տարբեր կառույցների հետ, մասնավորապես Ագրարային համալսարանի, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետ որտեղ ուսանողները անց են կացնում իրենց հետազոտական պրակտիկաները: Նա նշեց նաև, որ ուսանողները հետաքզոտական պրակտիկա են նախատեսել նար Սևանի ազգային պարկում:Թեման առնչվում է Սևան ազգային պարկի հիմնախնդիրների հետ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին-Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Ռ. Սադոյանը անդրադառնալով կենսաբանության, քիմիայի և դրնաց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաներին նշեց, որ այդ առնում տեսնում է լուրջ խնդիր՝ խնդիր կապված թեմաների վերռնագրերի ձևակերպման և բուհի պահանջներին մասամբ չհամապատասխանելու առումով: Նա նշեց որոշ թեմաներ որոնք ձևակերման և բովանդակային առումով շտկման կարիգ ունեն: Ներկայացվեցին նաև ԱԴՄ, Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնների շտկման կարիգ ունեցող թեմաները: Գլխավոր խնդիրը Ռ. Սադոյանը համարեց դրանց մանկավարժամեթոդական ուղղվածության բացակայությունը: Կազմակերպված քննարկում: Ռ. Սադոյանը նշեց, որ ԿՔԴՄ ամբիոնում ունենք նաև կենսաբանական թեմաներ որոնք ղեկավարում են քիմիայի մասնագետները այդ առումով մեր մոտեցումը այն է, որ թեմաների ձևակերպումը պետք է լինի այնպես, որ դրանք իրենց բովանդակությամբ ունենան կենսաքիմիական բնույթ, այսինքն երևա միջառարկայական կապը: Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերի թեմաներին ԱԴՄ ամբիոնում ունենք տխուր իրավիճակ դրանք բավականին մեծ ծավալ են ենթադրում և չի երևում թե ուսանողը ինքնուրույն ինչ հետազոտություն պետք է կատարի: Սադոյանը առաջարկեց այդ թեմաները նորից վերանայել:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Հ. Հակոբյանի զեկուցումը հեռակա բակալավրիատի 1-ին կուսերի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Նա նշեց, որ բակալավրիատի հեռակա ուսուցման 1-ին կուրսերի ուսումնական գործընթացը կազմակերպվում է մեկ շաբաթ տևողությամբ և ենթադրում է յուրաքանչյուր առարկա

դասավանդող դասախոսի հետ մեկական դասաժամ ճանաչողական հանդիպումներ: Դրանց ընթացքում ուսանողներին դասախոսները պետք է ծանոթացնեն classroom հարթակին, առարկայական նկարագրերին ու ուսումնական փաթեթներին: Googleclassroom-ի միջոցով ուսանողները պետք է կցվեն համապատասխան առարկաներին, ապա դեկտեմբերին նախատեսված է միջանկյալ քննությունները էլեկտրոնային միջանկյալները classroom-ի միջոցով, իսկ արդեն հունվարին կմասնակցեն տվյալ առարկայի դասընթացներին: Նա նշեց նաև, որ կոնսուլտացիաների գրաֆիկները կազմված են:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը ԱԴՄ ամբիոնի պրոֆեսոր Գ. Կարապետյանի 80 ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ամփոփ ժողովածուի հրատարակելու երաշխավորման հարցը:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը Յու. Մուրադյանը, Կ. Դանիելյանը,Տ. Թանգամյանը ովքեր դրական արտահայտվեցին ժողովածուի նյութերի վերաբերյալ:

Որոշեցին- Գ. Կարապետյանի 80 ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ամփոփ ժողովածուն երաշխավորել հրատարակման:

Լսեցին- Ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ՝ Ն. Սամվելյանի հաղորդումը ՀՊՄՀ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Արմեն Աշոտի Աջամօղլյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցի վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ն. Սամվելյանը նշեց, որ Ա. Աջամօղլյանը ներկայացրել է ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ պահանջվող բոլոր համապատասխան փաստաթղթերը:

Ռ. Սադոյանը, Գ. Կարապետյանը և Յու. Մուրադյանը նշեցին ֆակուլտետում և ամբիոնում Ա. Աջամօղլյանի կատարած բարեխիղճ աշխատանքն ու գիտամանկավարժական արդյունավետ գործունեությունը:

Որոշեցին- Հաշվի առնելով արտահայտված կարծիքները՝ դիմել համալսարանի գիտական խորհուրդ Արմեն Աշոտի Աջամօղլյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու առաջարկությամբ:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը Վահրամ Տորիկի Հայրապետյանի և Վարուժան Ստեփանի Հովհաննիսյանի «Ողնաշարավորների կենդանաբանություն (ձկներ, երկկենցաղներ, սողուններ)» մաս 1-ին և «Ողնաշարավորների

կենդանաբանություն (թռչուններ, կաթնասուններ)» մաս 2-րդ ուսումնական ձեռնարկները հրատարակման երաշխավորելու վերաբերյալ:

Արտահայտվեցին- Կ. Դանիելյանը, Լ. Ավանեսյանը, Տ. Թանգամյանը, ովքեր արժևորեցին ուսումնական ձեռնարկի նշանակությունը համապատասխան մասնագիտության ուսանողների համար:

Որոշեցին- Հիմք ընդունելով արտահայտված կարծիքները՝ Վահրամ Հայրապետյանի և Վարուժան Հովհաննիսյանի «Ողնաշարավորների կենդանաբանություն (ձկներ, երկկենցաղներ, սողուններ)» մաս 1-ին և «Ողնաշարավորների կենդանաբանություն (թռչուններ, կաթնասուններ)» մաս 2-րդ ուսումնական ձեռնարկները երաշխավորել հրատարակման:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 3 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1.Տեղեկատվություն ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
2.Բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում: **Զեկ. Ի. Միրեկանյան**
3.Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների քննարկում: **Զեկ. Ռ. Սադոյան**
7. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ամբիոնների վարիչների տեղեկատվությունը ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Ա. Խոյեցյանը նշեց, որ 2 օր առաջ ԱԴՄ ամբիոնի նիստում լսվել է ամբիոնի մեկ ասպիրանտի և մեկ հայցորդի կատարած գիտական աշխատանքների մասին հաշվետվություն: Ամբիոնը ունի նաև 1 ավարտած ասպիրանտ, ով նույնպես նիստին ներկայացրեց իր կատարած աշխատանքը: Ա. Խոյեցյանը նշեց, որ ամբիոնի հայցորդ Գայանե Բարսեղյանը հանձնել է փիլիսոփայություն առարկայի մինիմումը 2018-2019 հրատարակել է 2 հոդված: Ամբիոնի ասպիրանտ Հայարփի Հակոբյանը մշակել է աշխատանքային պլանը կատարել է գրականության վերլուծություն և մեկ հոդված ներկայացրել է հրատարակման: Նա նաև նշեց, որ ասպիրանտ Անի Մկրտումյանի աշխատանքը գտնվում է ավարտական փուլում և ասպիրանտները և ամբիոնի հայցորդը ատեստավորվել են:
Կենսաբանության, քիմիային դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ս. Պիպոյանի բացակայության պատճառով տեղեկատվություն տվեց Ռ. Սադոյանը: Նա նշեց, որ ամբիոնի հայցորդներ Արմենուհի Փիլթակյանը, Անուշ Խաչիկյանը և Մարինե Ստեփանյանը ներկայացրել են հաշվետվություններ, աշխատանքները տարվում են ըստ կազմված պլանի, հետազոտությունների արդյունքները ներկայացվել են թեզիսների տեսքով հրատարակման:

Ռ.Սադոյանը նաև նշեց, որ ԿՔԴՄ ամբիոնի հայցորդ Նաիրա Մանվելյանը կատարված աշխատանքների հաշվետվություն չի ներկայացրել հետևաբար չի անցել ատեստավորման հերթական փուլը:

Որոշեցին- Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն և ատեստավորել Գայանե Բարսեղյանին, Հայարփի Հակոբյանին, Անուշ Խաչիկյանին և Նարինե Ստեփանյանին, իսկ Նաիրա Մանվելյանին չատեստավորել:

Լսեցին-Ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփիչ հաշվետվությունը (ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Ի. Սիրեկանյանը բացակայում էր): Նա նշեց, որ որպես վերջնաժամկետ նշանակված դեկտեմբերի 5-ի դրությամբ ֆակուլտետի 4-րդ կուրսեցիները պետք է ավարտեն պրակտիկայի թղթապանակների դեկանատ հանձնման գործընթացը: Մագիստրատուրայի մանկավարժահետազոտական պրակտիկայի առումով Ռ. Սադոյանը մտահոգություն հայտնեց առ այն, որ պարբերաբար շրջայցեր կազմակերպելիս նկատվել է, որ որոշ մագիստրոսներ լսարանում ներկա չեն, այսինքն չեն հաճախում կամ պարբերաբար բաց են թողնում պրակտիկան: Ռ. Սադոյանը հորդորեց պրակտիկայի ղեկավարներին առանձնահատուկ ուշադրություն դարձնել պրակտիկանտների հաճախումներին: Վ. Հովհաննիսյանը նշեց, որ էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի ուսանողները իրենց պրակտիկան անցնում են կենդանաբանության, հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոններում և էկոնոսֆերային հետազոտությունների կենտրոնում, պրակտիկաները նորմալ ընթացքի մեջ են օրագրերը պատրաստ են:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ: Նա նշեց, որ ռեկտորատի նիստի ժամանակ ներկայացվել են ամբիոններում և ֆակուլտետում Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքները: Համակարգը գործում է 5 տարի և բոլորս էլ գիտենք թե ինչ պահանջներ են ներկայացված դրան: Ռ. Սադոյանը ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների արդյունքները: Պահանջվեց ցանկացած փաստաթուղթ որը պետք է ուղարկվի համապատասխան բաժին ուղարկվի նաև դեկանատ, այսինքն դեկանատին պառտադիր պետք է իրազեկել համապատասխան տեղեկատվությամբ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման հարցը: Ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանը հանգամանալից ներկայացրեց ֆակուլտետի ուսումնակրթական և գիտական աշխատանքների հաշվետվությունը:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն և հաստատել ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2019թ. դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 4 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. 2019-2020 ուստարի 1-ին կիսամյակի քննական գրաֆիկի քննարկում և հաստատում: **Զեկ. Ռ. Սադոյան**
2. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Ռ. Սադոյան**
3. Տեղեկատվություն ամբիոններում 2019 թվականի գիտական աշխատանքների և տպագրությունների վերաբերյալ: **Զեկ. Ն. Սամվելյան**
4. Բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում: **Զեկ. Ի. Սիրեկանյան**
5. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների քննարկում: **Զեկ. ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ**
6. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Ի. Սիրեկանյանի հաղորդումը բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների վերաբերյալ: Նա նշեց, որ ելնելով նախորդ տարիների փորձից մեր կողմից հստակեցվել են պրակտիկայի փաթեթների պաշտպանության ձևաչափերի այն բոլոր կետերը, որոնց շուրջ ուսանողները պետք է խոսեն և ներկայացնեն իրենց պրակտիկայի արդյունքները: Խոսքը վերաբերում է 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների պաշտպանության ձևաչափին, արդյունքնում ունեցանք պաշտպանություններ: Մյուս փոփոխությունը կապված էր հանձնաժողովի կազմի հետ. հանձնաժողովը ձևավորվել է որպես բազմամասնագիտական թիմ, որում այս տարի չեն ընդգրկվել պրակտիկաների ղեկավար մեթոդիստները: Նրանց փոխարեն հանձնաժողովում ընդգրկվել են համապատասխան ամբիոնների դասավանդման մեթոդիկայի մասնագետները՝ ԱԴՄ ամբիոնից Ա. Մինասյանը, իսկ ԿՔԴՄ ամբիոնից Տ. Թանգամյանը: Բակալավրիատի 3-րդ կուրսերի համար նման փոփոխություններ չկան, բայց նոր ձևաչափը նախատեսվում է կիրառել նաև 3-րդ կուրսի թղթապանակի պաշտպանության ժամանակ՝ այդ փուլին ներկայացվող պահանջներին համապատասխան: Պրակտիկայի պաշտպանության արդյունքների բարելավումը կրում է շարունակական բնույթ: Բակալավրիատի 3-րդ կուրսեցիների ելույթները

համակարգված չէին և ցանկալի արդյունք չապահովեցին: Մեր կարծիքով պատճառը 3-րդ կուրսեցիների մասնագիտական և մեթոդամանկավարժական գիտելիքների խիստ պակասն է:

Արտահայտվեցին- Վ. Հովհաննիսյանը, Ա. Խոյեցյանը, Ս. Պիպոյանը ,Կ. Դանիելյանը ովքեր հավանություն տվեցին մշակված նոր ձևաչափին և առաջարկեցին այն կիրառել համալսարնաի բոլոր ֆակուլտետներում:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը ամբիոններում 2019 թվականի գիտական աշխատանքների և տպագրությունների վերաբերյալ: Նա նշեց, որ ֆակուլտետի կազմում գործող ամբիոնների դասախոսների կողմից 2019թ-ին հրատարակվել է 43 գիտական հոդված որոից 28 հանրապետությունում 15 արտասահմանյան գիտական տեղեկագրերում, 4 մենագրություն, 2 դասագիրք և 1 ուսումնական ձեռնարկ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի վերաբերյալ: Նա նշեց, որ 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակի դասերը նախատեսված են հունվարի 8-22-ը որից հետո սկսում է քննաշրջանը: 2-րդ կիսամյակը նախատեսված է հունվարի 30-ից փետրվարի 12-ը: Հեռակա ուսուցման 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի ուսումնական գործընթացը նախատեսված է հունվարի 8-ից փետրվարի 6-ը, գրաֆիկներն արդեն հաստատված են: Նա նշեց նաև, որ խդիրներ կան կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որոշ առարկաների թափուր ժամերի հետ: Խնդիր ունենք հատկապես համապատասխան մասնագետների առկայության հետ, հարցը քննարկվել է համալսարնի ռեկտորի, պրոռեկտորի և ուսումնական մասի մասնագետների հետ և կարծում եմ, որ մոտակա ժամանակներում լուծում կստանա:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը 2019-2020 ուստարի 1-ին կիսամյակի քննական գրաֆիկի հաստատման վերաբերյալ: Նա նշեց, որ քննական գրաֆիկն ու քննությունների ժամանակացույցը պատրաստ են և տոներից հետո ֆակուլտետում կկազմակերպվի ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացը:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների վերաբերյալ: Ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Ն. Գրիգորյանի հաղորդումը կցվում է ստորև:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը Կենսաբանության, քիմիայի և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի նշանակման վերաբերյալ: Հայցորդը հակիրճ ներկայացրեց իր աշխատանքի բովանդակությունը:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը, Մ. Երիցյանը, Տ. Թանգամյանը:

Որոշեցին- Դիմել ՀՊՄՀ գիտական խորհրդին քննարկելու և հաստատելու կենսաբանության, քիմիայի և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի <<Նախագծերի մեթոդը որպես աշակերտների հետազոտական կարողությունների զարգացման միջոց քիմիայի ուսուցման գործընթացում>> վերնագրով թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար հաստատել՝ մանկավարժական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լիդա Արշակի Սահակյանին:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը Ժաննա Վլադիմիրի Սարգսյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ: Ժ. Սարգսյանը հակիրճ ներկայացրեց աշխատանքի բովանդակությունը:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը, Մ. Երիցյանը, Տ. Թանգամյանը:

Հարցը դրվեց քվարկության: Խորհրդի ներկա 19 անդամներից անդամներից 13-ը քվեարկեցին կողմ, 6-ը ձեռնպահ:

Որոշեցին- Դիմել ՀՊՄՀ գիտական խորհրդին քննարկելու և հաստատելու Ժաննա Վլադիմիրի Սարգսյանի «Քիմիայի խնդիրների լուծման մեթոդական համակարգի կատարելագործման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում» վերնագրով դոկտորական ատենախոսության թեման:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը «Աշխարհագրություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Ապրեսի Սահակյանի մագիստրոսական ատենախոսության թեմայի փոփոխման հարցի վերաբերյալ: Նա նշեց, որ ԱԴՄ ամբիոնից ստացվել է 2019թ. Նոյեմբերի 26-ի թիվ 5 նիստի արձանագրությունից քաղվածք առ այն, որ ամբիոնում լսվել է Ն. Սահակյանի մագիստրոսական ատենախոսության վերնագրի (թեմայի) փոփոխման հարցը: Առաջարկվել է մագիստրոսական ատենախոսության թեմա հաստատել «ՀՀ Ճամբարակ համայնքի զբոսաշրջային ռեսուրսների աշխարհագրական ուսումնասիրությունը և դրա գիտակրթական արդյունքը(Կայուն զբոսաշրջության համատեքստում)»:

Արտահայտվեցին- Ա. Խոյեցյանը, Յու. Մուրադյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին հարցի վերաբերյալ:

Որոշեցին- Աշխարհագրության մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Սահակյանի «ՀՀ Ճամբարակ համայնքի զբոսաշրջային ռեսուրսների աշխարհագրական ուսումնասիրությունը և դրա գիտակրթական արդյունքը(Կայուն զբոսաշրջության համատեքստում)» մագիստրոսական ատենախոսության թեման հաստատել:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2020թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 5 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Ռ. Սադոյան**
2. Բակալավրիատի հեռակա ուսուցման 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Վ. Հովսեփյան**
3. 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սադոյան**
4. Google classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և առկա ուսուցման համակարգում 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն **Զեկ. Ռ. Սադոյան, ամբիոնների վարիչներ**
5. Ընթացիկ հարցեր:

Լսեցին-Ռ. Սադոյանի տեղեկատվություն բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի վերաբերյալ նա նշեց, որ հեռակա ուսուցման համակարգում 1-ին և 2-րդ կուրսերում հունվարի 30-ից կսկսվի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակը, դասերը մեկնարկել են հունվարի 8-ից: Մինչև հունվարի 21-ը այդ կուրսերում կազմակերպվել են 1-ին կիսամյակի դասընթացները, որից հետո մեկ շաբաթ քննաշրջան է կազմակերպվել: Հունվարի 30-ից կմեկնարկի 2-րդ կիսամյակը: Ինչ վերաբերում է 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերին ապա Ռ. Սադոյանը տեղեկացրեց, որ դասընթացները սկսվել են հունվարի 8-ին և կշարունակվեն մինչև փետրվարի 6-ը, իսկ 1-ին և 2-րդ կուրսերի դասերը կշարունակվեն մինչև փետրվարի 12-ը: Ընդհանուր առմամբ բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացն ընթանում է բնականոն հունով:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Վ. Հովսեփյանի տեղեկատվությունը բակալավրիատի հեռակա ուսուցման 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Նա նշեց, որ մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մեզ

տրամադրված մարզային բազաներին այս տարի ավելացել են ևս երեքը՝ Շիրակի Գյումրի քաղաքում մեկ դպրոց, Գորիսում մեկ դպրոց և Լոռիում մեկ դպրոց, որը կարծում ենք շատ հարմար է մեր սփյուռքի ուսանողների պրակտիկան կազմակերպելու համար: Մեզ տրամադրվել է նաև Երևանի մի շարք դպրոցներ նա նաև նշեց, որ այս պահի դրությամբ կազմված են գրաֆիկները ուսանողները բաշխված են ինչպես ըստ մարզերի այնպես էլ ըստ Երևան քաղաքի դպրոցների: Ստացել ենք երեք ուսանողից 3 դիմում ովքեր ցանկանում են պրակտիկան անցնել անհատական գրաֆիկով երեքն էլ կենսաբանություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներ են: Նրանցից մեկը Կապանի Նորաշեն համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցչուհին է մյուս երկուսը աշխատում են Արցախի հանրապետության ուսումնական հաստատություններում:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը նշեց, որ Երևանի դպրոցներում կազմակերպվող մանկավարժական պրակտիկաների արդյունավետությունը շատ ավելի բարձ է այն իմաստով, որ ղեկավար մեթոդիստները հնարավորություն ունեն ամենօրյա այցեր կազմակերպել դպրոցներ և մշտապես աշխատել ուսանողների հետ: Դրան հակառակ օրինակ Արցախի հանրապետություն, Լոռի կամ Շիրակ մեթոդիստը լավագույն դեպքում մեկ անգամ կարող է այցելել դպրոց:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի և ամբիոնների վարիչների հաղորդումը Google classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և առկա ուսուցման համակարգում 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2020թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 6 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. Տեղեկատություն առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և բակալավրիատի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: **Զեկ. Ի. Միրեկանյան**
2. Հեռակա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների և 3-րդ, 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Վ. Հովսեփյան**
3. Տեղեկատվություն ֆակուլտետի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
4. Տեղեկատվություն 2018-2019թթ ամբիոնների ռազմավարական պլանի կատարողականի և 2020թ-ի տարեկան գործողությունների պլանի վերաբերյալ: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
5. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ն.Սամվելյանի հաղորդումը աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Տիգրան Բաբայանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի առաջադրման հարցը: Ն.Սամվելյանը նշեց, որ ֆակուլտետի խորհուրդը ստացել է քաղվածք ԱԴՄ ամբիոնի փետրվարի 4-ի թիվ 7 նիստի արձանագրությունից առ այն,որ ամբիոնում ,որպես թեկնածուական ատենախոսության թեմա է առաջարկվել <<Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մանկավարժական պայմանները աշխարհագրության

բուհական դասավանդման գործընթացում>>,իսկ գիտական ղեկավար աշխգիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Խոյեցյանը:
Արտահայտվեցին- Հայցորդ Տիգրան Բաբայանը ներկայացրեց թեմայի արդիականությունը,նպատակը , խնդիրները և կատարվելիք աշխատանքի բովանդակությունը:Ա. Խոյեցյանը ,Յու Մուրադյանը,Գ.Կարապետյանը նշեցին ,որ թեման արդիական է, ունի ինչպես գիտատեսական, այնպես էլ ուսումնակրթական և կիրառական նշանակություն:
Որոշեցին-Դիմել ՀՊՄՀ գիտական խորհրդին քննարկելու և հաստատելու աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Տիգրան Բաբայանի <<Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մանկավարժական պայմանները աշխարհագրության բուհական դասավանդման գործընթացում>> վերնագրով թեկնածուական ատենախոսության ատենախոսության թեման,իսկ գիտական ղեկավար՝ աշխգիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Խոյեցյանին:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան